**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

ք. Երևան 25.03.2022թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
## թիվ ԳԲՔԱ-LO-2022/24

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ֆ. Մանգյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան
Բողոք բերող՝ «Վիններ Գրուպ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-22/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, նստարանների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Վիններ Գրուպ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 25.02.2022թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

## Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>.**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է ոչ իրավաչափ ճանաչել ընթացակարգի գնահատող

հանձնաժողովի կողմից հայտի մերժումը և պարտավորեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «Վիններ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկն ընդունել արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը՝ 13 230 000 (տասներեք միլիոն երկու հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ գումարը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 25.02.2022թ.-ին:

28.02.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/24 համարի ծածկագիրը:

09.03.2022թ.-ին և 25.03.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 09.03.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 25.03.2022թ.-ին:

**2. «Վիններ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Վիններ Գրուպ» ՍՊԸ-ն 25.02.2022թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

*««Վիններ Գրուպ» սահմանափակ պատասխանատվության ընկերության բողոքի առարկան, բողոքի փաստական և իրավական հիմքերը, ապացույցները և պահանջը:*

*Բողոքի առարկան՝ Երևանի քաղաքապետարանի կողմից 09.02.2022թ. հայտարարվել է ԵՔ-ԳՀԱՊՁԲ-22/5 ծածկագրով գնանշման հարցում, որն իրականացվում է էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով: «Վիններ Գրուպ» սահմանափակ պատասխանատվության ընկերությունը 17.02.2022թ. վերը նշված համակարգի միջոցով ներկայացրել է հրավերի պահանջներին համապատասխանող փաստաթղթերի փաթեթ: Ներկայացված փաստաթղթերից գնային առաջարկում (հավելված 2) առկա է տեխնիկական վրիպակ, մասնավորապես՝ «ընդհանուր գինը» սյունակում «13230000 (տասներեք միլիոն երկու հարյուր երեսուն հազար)»-ի փոխարեն նշվել է «13230000 (տասներեք հազար երկու հարյուր երեսուն հազար)»:*

*Նշված վրիպակը նկատելուց հետո (21.02.2022թ. ժամը՝ 14:00-ից 14:30) մեր ընկերության ներկայացուցիչը 044390909 հեռախոսահամարից զանգահարել է պատվիրատուի 011514216 հեռախոսահամարին և հայտնել առկա խնդրի մասին՝ նշելով այն իրավական նորմը, որով հստակ սահմանված է նշված խնդրի կարգավորումը:*

*22.02.2022թ. ժամը 17:09-ին ընկերության էլեկտրոնային փոստի հասցեին պատվիրատուի կողմից ուղարկված թիվ 3 արձանագրության ուսումնասիությունից պարզվեց, որ ««ՎԻՆՆԵՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում (հավելված 2) առկա է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ մասնավորապես. Արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով և թվերով նշված գումարների հանրագումարը չի համապատասխանում ընդհանուր գնի սյունակում նշված տառերով և թվերով գրված գումարի հետ:*

*Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժեց «ՎԻՆՆԵՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հայտը համաձայն ՀՀ կառավարության N 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն, այն է՝ «հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը»»:*

*Հարկ է նշել, որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հայտի մերժումը ոչ իրավաչափ է, քանի որ փաստական տվյալների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ «Վիններ Գրուպ» սահմանափակ պատասխանատվության ընկերության կողմից ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ: Գնային առաջարկում առկա վրիպակը չի նշանակում, որ ընկերությունը գնային առաջարկ չի ներկայացրել կամ ներկայացրել է հրավերի պահանջներին անհամապատասխան ուստի նշված իրավանորմը չի կարող իրավական հիմք հանդիսանալ ընկերության հայտը մերժելու համար: Արձանագրության մեջ նշված է նաև, որ «(...) Արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով և թվերով նշված գումարների հանրագումարը չի համապատասխանում ընդահուր գնի սյունակում նշված տառերով և թվերով գրված գումարի հետ», ինչը նույնպես չի համապատասխանում իրականությանը, քանի որ արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում թվերով նշված գումարների հանրագումարը համապատասխանում ընդհանուր գնի սյունակում նշված թվերով գրված գումարի հետ:*

*Ավելին ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված կարգով (այսուհետ՝ Կարգ) ի թիվս այլ կարգավորումների սահմանվել է նաև սույն խնդրի կարգավորման հարցը, մասնավորապես կարգի 32-րդ մասի 2-րդ կետի ե) ենթակետի համաձայն հայտը ենթակա չէ մերժման եթե «գնային առաջարկի արժեբ և ավելացված արժեթի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանթ համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում*

*տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում, սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում արժեք և ավելացված արժեթի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը»: Բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝*

*1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 7-ին կետի համաձայն՝ սույն օրենքի նպատակի և պահանջների կատարման ապահովման համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է գնահատող հանձնաժողովի կազմակերպման և գործունեության կարգը:*

*2. Օրենքի 30-րդ հոդվածի համաձայն մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով:*

*3. Օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:*

*4. Կարգի 32-րդ մասի 2-րդ կետի ե) ենթակետի համաձայն՝ հայտը ենթակա չէ մերժման եթե՝ գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում, սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը:*

*Վերը նշված իրավանորմերի և փաստական հանգամանքների համակարգային վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ «Վիններ Գրուպ» սահմանափակ պատասխանատվության ընկերության կողմից ներկայացված հայտը համապատասխանում է Օրենքի, Կարգի և հրավերի պահանջներին և ենթակա չէ մերժման, ուստի հանձնաժողովը անտեսելով նշված իրավանորմը դուրս է եկել իր լիազորությունների շրջանակից՝ հայտը մերժել այնպիսի իրավական հիմքով, ինչն ընդհանրապես չի վերաբերվում սույն փաստական հանգամանքներին:»:*

Ելնելով վերոգրյալից, «Վիններ Գրուպ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է ոչ իրավաչափ ճանաչել ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հայտի մերժումը և պարտավորեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «Վիններ Գրուպ» ՍՊԸ-ի

կողմից ներկայացված գնային առաջարկն ընդունել արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը՝ 13 230 000 (տասներեք միլիոն երկու հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ գումարը:

**3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

Բողոքներ քննող անձը 28.02.2022թ.-ին թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/2/3431-2022 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետարանին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Վիններ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 25.02.2022թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 07.03.2022թ.-ին ներկայացված թիվ 02/61-26424 գրությամբ ներկայացնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով պահանջված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-22/5» ծածկագրով գնման ընթացակարգի համապատասխան փաստաթղթերի պատճենները:

Նույն գրությամբ Պատվիրատուն ներկայացնելով գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

*«Ի պատասխան Երևանի քաղաքապետին հասցեագրված Ձեր 28.02.2021 գրության՝ «Վիններ Գրուպ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 25.02.2022 ներկայացրած բողոքի վերաբերյալ, տեղեկացնում եմ հետևյալը.*

*Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/5» գնման ընթացակարգի շրջանակներում Ընկերության կողմից ներկայացվսփ գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է անհամապատասխանությո պահանջների նկատմամբ, այն է՝ թիվ 2 հավելվածով ներկայացված գնային առա «Արժեք» և «Ավելացված արժեքի հարկ» սյունակներում տառերով և թվերով նշված հանրագումարը չի համապատասխանել «Ընդհանուր գին» սյունակում նշված տառերով գրված գումարին:*

*Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության N 526-Ն որոման 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներով՝ Ընկերության հայտը գնահատել է անբավարար և մերժել:*

*Վերոգրյալով պայմանավորված՝ գտնում եմ, որ գնահատող հանձնաժողովը կայացված որոշումն իրավաչափ է, քանի որ ՀՀ կառավարության 04.05.2017 որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 2-րդ մասի ե) ենթակետի համաձայն հայտը ենթակա չէ*

*մերժման եթե «գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ», սակայն գնահատող հանձնաժողովը մերժել է նշված հայտը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Ընդհանուր գին» սյունակում տառերով գրված գումարի մեջ լրացված է ոչ թե ավելորդ բառ, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ, այլ նշված է սխալ բառ, որի արդյու ստացվել գոյություն չունեցող թիվ:*

*Կից Ձեզ է տրամադրվում «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-22/5» ծածկագրով գնման ընթեցակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:»:*

**4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2022/24 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.**

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Երևանի քաղաքապետարանի կողմից նստարանների ձեռքբերման նպատակով 09.02.2022թ.-ին հայտարարվել է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-22/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Վիններ Գրուպ» ՍՊԸ-ն:

iii. «Վիններ Գրուպ» ՍՊԸ-ն ներկայացրած գնային առաջարկով ներկայացրել է հետևյալը.

| Չափա-բաժինների համարները | Ապրանքի անվանումը | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/ | ԱԱՀ** /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5=3+4 |
| 1 | Նստարաններ | 11025000 (տասնմեկ միլիոն քսանհինգ հազար) | 2205000 (երկու միլիոն երկու հարյուր հինգ հազար) | 13230000 (տասներեք հազար երկու հարյուր երեսուն հազար) |

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 22.02.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 2.2-րդ կետի համաձայն՝ Ընկերության

կողմից Հավելված 2-ով ներկայացված գնային առաջարկում առկա է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝ արժեք և ավելացված արժեքի հարկ սյունյակներում տառերով և թվերով նշված գումարների հանրագումարը չի համապատասխանում ընդհանուր գնի սյունյակում նշված տառերով և թվերով գրված գումարի հետ:

v. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջները, որոշել է «Վիններ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

## 5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ «Վիններ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախոսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան

նստարանների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն Ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու

համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՛ թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի արժեք, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում, սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ

աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Երևանի քաղաքապետարան-ի կողմից նստարանների ձեռքբերման նպատակով 09.02.2022թ.-ին հայտարարված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-22/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 5.1-րդ կետի համաձայն՝ առաջարկվող գինը ծառայության արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով համակարգի միջոցով:

Հրավրի 5.2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա

վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ընդ որում՝ որոշ բացառություններով, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի կողմից նստարանների ձեռքբերման նպատակով 09.02.2022թ.-ին հայտարարված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-22/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Վիններ Գրուպ» ՍՊԸ-ն գնային առաջարկով որպես ապրանքի անվանում

նշել է՝ նստարաններ, արժեք՝ 11025000 (տասնմեկ միլիոն քսանհինգ հազար) ՀՀ դրամ, ԱԱՀ՝ 2205000 (երկու միլիոն երկու հարյուր հինգ հազար) ՀՀ դրամ, ընդհանուր գինը՝ 13230000 (տասներեք հազար երկու հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ:

Հանձնաժողովի 22.02.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 2.2-րդ կետով արձանագրվել է, որ Ընկերության կողմից Հավելված 2-ով ներկայացված գնային առաջարկում առկա է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝ արժեք և ավելացված արժեքի հարկ սյունյակներում տառերով և թվերով նշված գումարների հանրագումարը չի համապատասխանում ընդհանուր գնի սյունյակում նշված տառերով և թվերով գրված գումարի հետ, ինչով պայմանավորված որոշում է կայացվել «Վիններ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

Ամբողջացնելով գործում առկա փաստերը՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ թիվ 2 հավելվածում՝ գնային առաջարկում, Ընկերությունը որպես ընդհանուր գին նշել է 13230000 (տասներեք հազար երկու հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, դրանց համադրման արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ Ընկերությունը՝ թիվ 2 հավելվածի՝ գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացրել է ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված է ավելորդ բառ (հազար), որի արդյունքում ստացվել է գոյություն չունեցող թիվ, այն է՝ տասներեք հազար երկու հարյուր երեսուն հազար:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Հանձնաժողովը չպետք է գնային առաջարկի մասով մերժեր Ընկերության հայտը, ուստի Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Վիններ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և պետք է բավարարել՝ ապահովելով Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթներով սահմանված սկզբունքների կիրառումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վիններ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 25.02.2022թ.-ին թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/24 ծածկագրով ներկայացրած բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-22/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Վիններ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին կայացված որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ**
**ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝** **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**